«Դիմային ցավերի պատճառները և ախտորոշումը»

2023թ. հունիսի 10-ից կրկնողաբար Երևան քաղաքում («Մեդիտրինա» ուսումնական կենտրոն՝ Չարենցի 5) «Մեդիտրինա ՈՒԿ» ՍՊԸ կողմից կանցկացվի «Դիմային ցավերի պատճառները և ախտորոշումը» թեմայով սեմինարը: Ծրագիրը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով: Թիրախային լսարանը՝ բժիշկ ստոմատոլոգներ, դիմածնոտային վիրաբույժներ: Մասնակիցներին կշնորհվի ՇՄԶ 6 տեսական կրեդիտ: Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարել (033)003201 հեռախոսահամարով:

**ԾՐԱԳԻՐ**

**«ԴԻՄԱՅԻՆ ՑԱՎԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ» ԹԵՄԱՅՈՎ ՍԵՄԻՆԱՐԻ**

Հունիսի 10, կրկնողաբար, 2023թ., ք. Երևան («Մեդիտրինա» ՈՒԿ)

«Մեդիտրինա ուսումնական կենտրոն» ՍՊԸ

| | | |
|---|---|---|
| 10:00-13:15 | **Դասախոսություն**<br>Ստործնոտային նյարդի տեղագրական անատոմիա և ֆունկցիոնալ նշանակություն:<br>Եռորյակ նյարդի պաթոլոգիաներ: Նևրալգիա:<br>1.Ստորին ատամնաբնային նյարդի նևրոպաթիա<br>2.Եռորյակ նյարդի վնասվածքների դիֆերենցիալ ախտորոշման սխեման 3.Ստորին ծնոտի խողովակի պերֆորացիայի կլինիկական մարտավարություն 4.Արթրալգիայի կլինիկական նշաններ | Սարգիս Անանյան |
| 13:15-13:45 | Ընդմիջում | |
| 13:45-15:00 | **Դասախոսություն** Քունք-ստործնոտային հոդի դիսֆունկցիա: Կրանիոմանդիբուլյար դիսֆունկցիաներ, գնաթոլոգիական և գնաթոնյարդամկանային մոտեցումներ: ՔՍԾՀ պաթոլոգիա և մկանային դիսֆունկցիա: Էթիոպաթոգենեզ, ախտորոշում (կլինիկական և լրացուցիչ հետազոտության մեթոդներ): | Միքայել Նալբանդյան |

| | | |
|---|---|---|
| | ՔՄԾՀ դիսֆունկցիայի ախտանիշներ, բուժում (սպլինտ թերապիա): Կերամիկական պսակներով և կամուրջներով պրոթեզավորման, վինիրների, կոմպոզիտային վերականգնումների և օրթոդոնտիկ բուժման հետևանքով առաջացող ՔՄԾՀ բարդությունների կանխարգելում | |
| 15:00-16:15 | **Դասախոսություն** Միոֆացիալ ցավային համախտանիշ: Կլինիկական դրսևորումների ձևավորման պատճառներն ու առանձնահատկությունները: Քունքստործնոտային հոդի արթրալգիայի և սիմպտալգիայի տարբերակիչ նշանները | Սարգիս Անանյան |
| 16:15-16:30 | Ավարտական թեստավորում | |

Թիրախային լսարան՝ բժիշկ ստոմատոլոգներ, դիմածնոտային վիրաբույժներ:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 35-40 հոգի: